

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿՈԼՈՏ

ՄԵԾԱՆՈՒՆ ՊԱՏՐԻԱՐԲԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(ԾՆՆԴԵԱՆ 300ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

1678 – 1978

«Սա ինքն Յովհաննէս Վարդապետ ունէր պարկեշտ վարս եւ խռակեան միտս եւ առատութիւն բանից ի քարոզս...: Այր առաքինի, գորաւոր ի բանս եւ արի ի գործս եւ յամենայնի հնարագիւտ: ... Արար եւ բազում մեծամեծ շինութիւնս, երաց եւ դպրատուն յիսկիւտար եւ աշակերտեաց գրազումս. ետ քարգմանել եւ գոյով գրեանս»:

(Հ. ՄԻՔ. ԶԱՄԶԵԱՆ, Պոմ. Հայոց, Գ. 770-75)

ՊԱՅԾԱՌ ԿԱՆԹԵՂԸ

Վերածնունդի մեծ Պատմահօր այս կուռ գնահատանքն ու դըր-
ուատիքը՝ Կոստանդնուպոլսոյ Յովհաննէս Կոլոտ Պատրիարքի մա-
սին, անոր երջանիկ մահէն հազիւ յիսնամեակ մը յետոյ դրի առ-
նուած եւ ներմուծուած մեր ժողովուրդի հինաւորաց կեանքի համայ-
նապատկերը կազմող դարապատումին մէջ, պայծառ կանթեղ մըն է՝
կարծէք՝ Բաղիշեցի պատկառելի Վարդապետին շիրմին վրայ պլպլ-
լացող, որ կու գայ լուսազարդել մեր հոգիներն ալ՝ Յօբելեանի շքեղ
շողշողումներով:

Զամչեանի հայրենասէր հոգիէն կեանք առած դամբանական մըն
է ինքնին այս բնարանը, կամ տապանագիր յաւերժական՝ քանդակիչ
եւ իմաստազեղ, որ ջինջ արձագանդն է միաժամանակ՝ Օսմանեան
խռովայոյզ մայրաքաղաքէն, օրը օրին, ականատես եւ ականջալուր
վկաներու թարմ դրիչով Վենետիկ հաղորդուած բազմապիսի տեղե-
կութիւններու, որոնց լոյսով աստղային՝ Պատմահայրը ոգեւորած է
Կոլոտի կեանքին ու վաստակին նուիրած իր յիշատակարանները¹:

1. Հ. ՄԻՔԱՅԷԼ ԶԱՄԶԵԱՆ, Պատմութիւն Հայոց, հտ. Գ., Վենետիկ, տպ. Յովհ.
Փիացեանց, 1786, էջ 770-779, 783, 801-824:

Հրատարակութիւն Ս. Ղազարի Հայկական Կաճառին
Publication de l'Académie Arménienne de Saint-Lazare - Venise

Կը հրատարակուի «Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան» նպաստով
Publié avec le concours de la «Fondation Calouste Gulbenkian»



Արդարեւ, կեանքը՝ զոր վարեց Բաղիշեցի Յովհաննէս Կոլոտ Պատրիարք, եղաւ վեհանձն ու անվերապահ նուիրում մը, տեւական ողջակիզում մը՝ ի նպաստ եւ ի բարգաւաճումն Կ. Պոլսոյ եւ Երուսաղէմի հայ Աթոռներուն, եւ առհասարակ համայն Հայաստանեայց Եկեղեցւոյ, ԺԸ. դարու մեր Վերածնունդի լուսաւոր պատմութեան հորիզոնն ի վեր քարձրացող գիտաւորի մը նման, որ առինքնեց հոգեսէր եւ ուսումնասէն թաղմաթիւ հետեւորդներ, աղօթքի եւ ներանձնական կեանքի սրբաբոյր օծութեամբ, գիտութեան ու գրաւորական աշխատանքի աննուաճ սիրով, եկեղեցաշէն վերանորոգիչ գործունէութեամբ:

Մեծանուն Պատրիարքին ծննդեան երեքհարիւրամեակին նուիրուած հայրապետական կոնդակին մէջ, շատ կենդանի դոյներով կը համադրէ Ն. Ս. Օծութիւն Տ. Տ. Վաղբէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ Կոլոտի գործն ու բաղմունքն Վաստակը, ու անդամ մը եւս կ'արծարծէ բոցը պայծառ կանթեղին, ըսելով. «Ոգիի ու կենդանի գործի հերոսական խոյանքով՝ Յովհաննէս Կոլոտ պատուեց դարերու խաւարը հայ հոգիներուն, լոյս աշխարհ բերաւ մոռցուած յիշատակները եւ արժէքները փառքի օրերու, վառեց կրակը Հայոց ազգային ինքնաճանաչման եւ հաւաքական շահերու գիտակցութեան: ... Անվարան Կարելի է հաստատել՝ թէ արեւմտահայութեան ազգային վերածնունդի լուսաւոր հորիզոնի սեմին կը բարձրանայ պայծառ անձնաւորութիւնը Յովհաննէս Կոլոտ Մեծագործ Պատրիարքին, իբր իր ժամանակի նոր լուսաւորիչ»²:

ՓԱՌՔԻ ԵՒ ՍՈՒԳԻ ՕՐԵՐ

ԺԴ. դարու վերջալոյսին հետ կը մարէր նաեւ Կիլիկեան արքաներու չքնաղ աստղը. չարարախտ այդ թուականէն ասդին, արեւելքէն սուրացող սմբակները արիւնդուշտ հրոսակներուն՝ քարուքանդ կ'ընէին ո՛չ միայն ամրակառոյց պարիսպները մեր լուսաշէն ոստաններուն, այլ նաեւ հիմնովին՝ կը կործանէին տաճար ու պալատ, կը մոխրացնէին արուեստ ու մշակոյթ, կը խեղդէին երգ ու շարական: Այսպիսի դաժան պարագաներու տակ՝ խաւարի եւ անկումի դարերու ստրկութեան կը մատնուէր ամբողջ հայ ժողովուրդը, հալածուելով նոյնիսկ իր պաշտելի ու շէն բնակավայրէն դէպի դառն ափերը օտարութեան:

Բայց Նախախնամութեան Աջն օրհնեալ կը հսկէր՝ Արարատի ծեր գմբէթէն՝ մեր տառապակոծ ազգին վրայ, եւ մոխիրներու անապատներէն՝ փիւնիկ թռչունին թեւերով՝ յարութեան աւետիսը կեանք

2. Կոնդակ, համար 792, տրուած Ս. Էջմիածնէն, 1977ի Օգոստոս 20ին:

կ'առնէր կրկին, հայազարմ մարգարէներու հրաշակերտ ձեռքերով կամ հերոսական սուրերով, մեր ցեղին ստեղծագործ գորութեան եւ աննկուն կորովին գովերգն հնչեցնելով՝ ԺԵ. դարու կամարներն ի վեր:

Տաթեւի դպրոցին փայլը, իր եռամեծ վարդապետներով, Գլաձորէն ոգի առած, հոգեվարքի ջահի մը պէս կը շողար՝ լուսապայծառ դիւթանքով՝ Սիւնեաց լեռներու խորհուրդին մէջ, այդպիսի ճշմարտամային տարիներուն (1350-1425): Հակառակ փառքի եւ սուրբի տարաբախտ ելեւէջներուն, Հայոց Հայրապետական Աթոռը Սիւսէն Սուրբ Էջմիածին կը վերադառնար, հաղարամեայ պանդխտութեան մը ետք, համազգային խանդավառ ցնծութեամբ ու հսկայական զոհողութիւններով, 1441 թուականին: Անդին՝ Օսմանեան կայսրութեան նոր մայրաքաղաքին մէջ, գրաւումի մահասարսուռ օրերէն հաղիւ ութը տարի անցած, Պատրիարքական նոր Աթոռ մը կը հաստատուէր՝ Սուրբան Մեհմէտ Բ. Ֆաթիհի օրով, 1461ին, Պրուսայի լուսամիտ Առաջնորդ՝ Յովակիմ Եպիսկոպոսի գահակալութեամբ, աղատատենչ մեր ժողովուրդին առջեւ նոր յոյսեր բանալով:

Սակայն, տխուր եւ անփառունակ է պատկերը այս Աթոռին պատմութեան՝ ամբողջ նախա-Կոլոտեան ժամանակաշրջանին, յատկապէս ԺԶ. դարու ընթացքին, երբ յիսունի չափ գահակալութիւն կը հաշուենք՝ լոկ երեւոյն անուններով, առանց նկատի առնելու տեղապահութեամբ ղեկավարուած անցքի շրջանները, նոյնիսկ աշխարհական անձերու գլխաւորութեամբ: Ողբերգական անընդհատ ելեւէջ մըն է անոր Գաւազանադիրքը, մանաւանդ ԺԸ. դարու արշալոյսին, երբ տասնեւչորս Պատրիարքներ դահ կը բարձրանան ու կ'իջնեն, դրեթէ ամէն տարի նոր դէմքի մը յայտնութեամբ կամ կրկներեւումով:

Բայց աւելի սարսափելի է տիրող մտայնութիւններու եւ այլազան գաղափարաբանութիւններու հնոցը, որ այդ օրերուն կը բորբոքի Վոսիփորի ափերուն: Գահատենչիկ մրցակցութիւններ, Աթոռը կաշառքով դնելու եւ գիրար տապալելու պժգալի ձեռնարկներ, մոլեռանդ սնափառութիւն, կրօնական անհեթեթ մէտքեր, եղբայրատեաց դաւաճանութիւններ եւ արիւնդ սաղրանքներ՝ քաղաքական իշխանութիւններու ալ միջամտութեամբ, սուրբ վարագոյր մը կը նետեն այդ ժամանակաշրջանի Պոլսոյ մեր պատմական թատերաբեմին վրայ:

Այսպիսի դժբախտ իրադարձութիւններու մէջ, իր նիւթական միջոցներէն բոլորովին արիւնաքամ, հսկայական պարտքերու տակ կը տուալտէր Պոլսոյ Հայոց Պատրիարքարանը, եւ իրեն հետ հետզհետէ դէպի քայքայում կը գահավիժէր նաեւ Երուսաղէմինը, որ՝ այդ շրջանին՝ միացած էր Պոլսոյ Աթոռին (1701-1703, 1704-1715):

Այս տխուր ժամանակաշրջանին էր որ Պոլիս կու գար Սերաստացի երիտասարդ վարդապետը Մխիթար (1700), վերածնունդի հըսկայական ծրագիրներով ոգեւորուած, որ կրօնական կազմակերպեալ նոր միաբանութիւն մը հիմնելու խիղախ գաղափարականով խանդավառ՝ նպատակ ունէր Կղարայրական սիրոյ եւ համերաշխութեան խարխիսը նետել հոգիներու մէջ, իրարու մերձեցնելով ծայրայեղօրէն ընդդիմադիր եւ իրերամերժ զանգուածները մեր ժողովուրդին, կրօնական ու մշակութային վերածաղկումի վարդապետներէն:

Բայց Պոլսոյ խռովայոյզ շրջանակին մէջ չկրցան աճիլ աւետարանական այդ յուռթի սերմերը. ու Մխիթար պարտադրաբար հեռացաւ հայաշատ այդ միջավայրէն, առանց երբեք յուսալքուելու կամ հրաժարելու իր երկնաշնորհ ներշնչումներէն, եւ առժամապէս հաստատուեցաւ Յունաստանի արեւմտակողմը՝ Վենետիկի Հասարակապետութեան գաղթավայր հողամասերուն վրայ, քաղաղ ու նըպաստաւոր պայմաններու մէջ իրագործելու՝ ինչ որ անհնարին էր եղած Պոլսոյ մէջ:

ՓՐԿՈՒԹԵԱՆ ԱՒԵՏԻՍԸ

Դարերու հոլովոյթին հետ, մեր վանքերն եղած են հոգեւոր լուսաւորութեան կեդրոններ, սրբութեան եւ գիտութեան ջահը արծարծելու համար հայ ժողովուրդին մէջ. եւ պատմութեան ընթացքին, յաճախ այդ լոյսին ծաւալման առաքեալներն եղած են մենաստանները՝ իրենց մահէն կամ կործանումէն ետք ալ, նոր ու բազմաբան ծրագրակաւ երկրէն ու մինչեւ իսկ, ի դին իրենց իսկ կեանքին, կարող եղած են վերապրեցնել սերունդներ ու նոր զարթոնք մը ոգեւորել:

Բաղէշի Ամրտօլու փոքրիկ վանքին պատմութիւնն ալ այս եղելութեան մէկ ցայտուն օրինակն է: Ծիշտ այն ատեն՝ երբ անոր մշակոյթի սրբազան ճրագը կը թուէր ի սպառ հանդած ըլլալ, յանկարծ՝ որպէս անթեղին տակէն՝ խոց կ'առնէր կրկին, երկու հոգեկից միաբաններու անխոնջ ճիգերով. լոյսը շուտով կը ճառագայթէր մինչեւ Պոլիս ու Երուսաղէմ, կ'ոգեւորէր ամբողջ հայութիւնը, բոցավառելով Վերածնունդի հորիզոնը՝ Արեւելքի մէջ:

Արդարեւ, Տաթևի կանթեղին բեկբեկումներէն շող մըն ալ ինկած էր Բաղէշ, Յովհաննէս Բրդուս Ոստանցիի († 1589) եւ մանաւանդ Բարսեղ Վրդ. Աղբակեցիի († 1615) անձնուէր ջանքերով. շող մը պայծառ՝ որ հետզհետէ աճելով, ԺԶ. եւ ԺԷ. դարերու որոշ շրջաններուն, հաւատքի եւ մշակոյթի կեդրոն մը կը դարձնէր Բաղէշի Ամրտօլու, աւելի ճիշտ՝ Յովհաննէս-Կարապետի կամ Ամրորդուոյն վանքը, զոր հուսկ՝ Վարդան Վրդ. Բաղիշեցի († 1705), «քաղ-

ցրաքարող եւ համեղաբան» կոչուած, մեծապէս կը զարգացնէր, բացառիկ զարկ տալով անոր ուսումնարանին, ճոխացնելով անոր դրադարանը, պատրաստելով եկեղեցանուէր ու գիտնական աշակերտներ, որոնց մէջէն պիտի փայլէին՝ իբրեւ հոգեկից զոյգ ամուսնի՝ Յովհաննէս Կոլոտ եւ Գրիգոր Շիրուանցի, այս վերջինը ծանօթ՝ որպէս Մուշի Ս. Կարապետի վանահայր ու Երուսաղէմի ապագայ Պատրիարք՝ «Շղթայակիր» յորջորջումով:

1710ական թուականներն էին՝ երբ գաւառէն յանկարծ Պոլիս կը ժամանէր երեսնամեայ հասուն եւ փորձառու վարդապետ մը, որ փրկութեան աւետիսը պիտի բերէր՝ իր առաքինազարդ կենցաղով, իր խոհեմ վարմունքով ու հնարամիտ ձեռնարկներով, եւ հսկայ թումբ մը պիտի կանգնէր կործանարար հեղեղին դիմաց, հանդարտեցնելով մայրաքաղաքին մրրկալից մթնոլորտը, կրօնական ու գրական նոր զարթոնքի եւ համադրային ծաղկումի մը մէջ:

Բաղէշի Ամրտօլու վանքէն, կարճահասակ՝ բայց խելացի ու հանճարեղ, բազմաշնորհ ու գիտնական անձնաւորութիւն մըն էր այդ հոգեւորականը, Յովհաննէս Վարդապետ Կոլոտ, որ Պոլիս կու գար՝ հանդանակութեան համետ նպատակներով, ի նպաստ 1709ի երկրաշարժէն քանդուած Մուշի Ս. Կարապետ վանքի վերաշինութեան: Զեռնարկի փայլուն եւ արագ յաջողութենէն խանդավառ, օրուան բարեմիտ Պատրիարքը՝ Սահակ Եպուհեխցի (1708-1714), մեծամեծներն ու ժողովուրդը Կոլոտի կը յանձնեն աւելի կարեւոր ու անհրաժեշտ գործ մը՝ փրկել Երուսաղէմի Հայոց վանքն ալ իր օրհասական ծանր տաղանապէս, որուն իսկոյն կը ձեռնարկէ Կոլոտ իր ազնիւ ձիրքերով եւ գործունեայ հնարամտութեամբ, Սուրբ Յակոբի դարաւոր մենաստանն ալ ազատելու համար հսկայական պարտքերու դժնդակ լուծէն, մեծ ուրախութիւն պատճառելով միաբաններուն եւ համայն ժողովուրդին: Ու շուտով բոլորը դիմթուած Կոլոտի շլացուցիչ յաջողութիւններէն, անշահասէր վեհանձնութենէն եւ անբասիր վարքէն՝ անոր իմաստուն առաջնորդութեան կ'ուզեն յանձնել Ազգին ղեկը:

1715, Սեպտեմբեր 16. Պոլսոյ մէջ, Պատրիարքական պաշտօնի կը բարձրանայ 37ամեայ Յովհաննէս Վրդ. Կոլոտ Բաղիշեցի, յաջորդելով Յովհաննէս Ը. Գանձակեցիին, որ համեստաբար կը քաշուէր ասպարէզէն՝ տեղի տալով համազգային առաջարկին, տարի մը եւ ութը ամիս գահակալելէ յետոյ: Ու կը ծագէր փրկութեան այդ լուսաշող:

Նորընտիր Պատրիարքին առաջին մտահոգութիւնը կ'ըլլար Երուսաղէմի Աթոռին վրայ հաստատել Մուշի Ս. Կարապետի Վանահայրը՝ իրեն հոգեկից Գրիգոր Վրդ. Շիրուանցին. սրբազան նախանձախնդրութեամբ վերջնականապէս կ'անջատէր երկու Աթոռները, դո-

յատեւումի եւ յարաճուն զարգացման ամուր ազդեակներ ընծայելով անոնց:

Այդ օրերուն՝ Մխիթար Աբբահայր, երկրորդ անգամ գաղթական, օսմանեան զօրքերու թնդանօթներէն հալածուած, ասպնջականութիւն կը գտնէր Վենետիկի խաղաղ ափերուն, Սուրբ Ղազարի մէջ հիմնելու իր նոր մենաստանը՝ հայրենի մեծ վանքերու սրբաբոյր օժովթեամբ:

ՇԻՆԱՐԱՐ ՊԱՏՐԻԱՐԺՈՒԹԻՒՆ ՄԸ

Տասնեւեկ տարի գործեց Կոլոտ Պատրիարք (1715–1726) իբր սոսկ վարդապետ. շինեց խաղաղօրէն, բարեգարդեց ու պայծառացուց Աթոռը, շահեցաւ շատերուն համակրանքը, համերաշխաբար ու խոհեմ վարմունքով հանդարտեցուց մռայլ հորիզոնը հոգիներուն, հիմնովին վերանորոգեց քաղմաթիւ եկեղեցիներ, նոր տաճարներ կանգնեց, դպրատուն հաստատեց՝ Սկիւտարի մէջ, պատրաստեց հոյլ մը աստուածանուէր աշակերտներ, մատենադարան հիմնեց, ձեռագիրներ հաւաքեց, մեծ զարկ տուաւ մշակութային եւ հրատարակչական աշխատանքներուն, քաջալերեց տպագրական աշխատանքի նուիրուած մշակները, թարգմանչական դպրոց մը ոտքի կանգնեց՝ հրապարակն ողողելով օգտաշատ գրքերու քաղմութեամբ մը, սերտօրէն սատարելու համար հայ ժողովուրդի հոգեւոր լուսաւորութեան:

1725ին, իջմիածնի Աստուածատուր Համատանցի Կաթողիկոսի մահէն ետք, Կոլոտ՝ Պոլսոյ մէջ ձեռնհասօրէն կազմակերպեց յաջորդին ընտրութիւնը, որ տեղի ունեցաւ տարի մը յետոյ, գահակալութեամբ Կարապետ Գ. Ուլնեցիի: Կաթողիկոսական մեծահանդէս օծումէն ետք, նորընտիր Հայրապետը իսկոյն եպիսկոպոս ձեռնադրեց ամէնուն սիրելի ու քաղմովաստակ Յովհաննէս Կոլոտ Պատրիարքը, նոյնպէս փառաշուք հանդիսաւորութեամբ:

Այդ թուականէն կը սկսի Կոլոտի Պատրիարքութեան երկրորդ շրջանը (1726–1741), երբ յատկապէս կը ծաղկի իր եկեղեցաշէն գործունէութիւնը, ո՛չ լոկ շինարարական իմաստով, որ իր ազդանուէր աշխատանքներուն շքեղ պրիսմակին մէկ երեսակն է միայն, այլ շատ աւելի ընդարձակ ու ամբողջական առումով, ինչպէս ըսինք, այսօրինքն՝ կրօնական ու մշակութային վերածաղկումի քաղմբանդ երեւոյթներով, որոնց վրայ՝ իբր մարմարեայ փառաւոր պատուանդանի մը բարձունքին՝ կը կանգնի կենդանի արձանը մեծանուն եւ մեծագործ Յովհաննէս Կոլոտ Պատրիարքին, որպէս «թուրքիոյ Հայոց Պատրիարքներու շարքին մէջ՝ ամէնէն մեծ դէմքը, իր կեանքով, գործունէութեամբ, արգասիքով եւ արտաբերած ոգիով», ինչպէս կը

պատգամէ անոր Աթոռին արժանաւոր յաջորդը՝ Ամենապատիւ Շնորհք Արքայակ. Գալուստեան³:

Այսպէս, Կոլոտ տակաւին կը գործէ ու կը մեծագործէ անընդհատ տասնեւհինգ տարի, մինչեւ իր երջանիկ մահը (1741, Փետր. 12), տեւականօրէն հետապնդելով Վերածնունդի ազգանուէր դատը, զոր Արեւմուտքէն ալ Մխիթար Աբբահայր խիզախաբար կը հրահրէր՝ անսպառ նուիրումով ու տիտանային աշխատանքով:

Կոլոտ Պատրիարք հաճոյքով կը հետեւէր՝ այդ շրջանին Վենետիկէն լոյս տեսնող պատկառելի հրատարակութիւններուն, որոնք հետաքրքրութեամբ կը կարդար, կը գնահատէր ու սիրով ալ կը բաժնէր իր հօտին, հոգեպէս ծարաւի Պոլսոյ հայ ժողովուրդին, եւ նոյնիսկ իր դպրատան աշակերտներուն՝ որպէս դասագիրք կամ սնունդ հոգիի ու մտքի:

Երբ Մխիթար Աբբահայր մեկնողական երկերուն դուրսագործոցը՝ Մատթէոսի Աւետարանին ընդարձակ մեկնութիւնը Պոլիս կը հասնէր, Կոլոտ, յետ անձնապէս տեղեակ դառնալու անոր հոգեպարար բովանդակութեան, աննախանձ հոգիով՝ որ յատուկ է հարադատօրէն առաքինի եկեղեցականներուն, եկեղեցւոյ բեմէն իսկ կը գոչէր. «Լոյս մեծ ծագեաց այսօր եկեղեցւոյս Հայոց. գանձ մեծ տըւաւ յԱստուծոյ գիրքս այս»⁴:

Կոլոտ Պատրիարք, դաւանական որոշ բայնախոհութենէ առաջնորդուած, եւ ի հեճուկս մոլեռանդ ազգայնականներու, իր լուսաւոր ծրագիրներուն իրագործումին աջակցելու կը հրաւիրէր ժամանակի անուանի եկեղեցականներէն՝ Ղուկաս Վրդ. Խարբերդցին, որ Հռոմի Հաւատոյ Տարածման կեդրոնին Ուրբանեան Վարժարանի նախկին սաներէն էր. անոր քաջ լատինագիտի հանդամանքէն եւ խոսքիւն լեզուի հմտութենէն օգտուելով՝ Կոլոտ թարգմանել կու տար Արեւմուտքի երեւելի աստուածաբաններու հմտալից գործերը, ինչպէս նաեւ օտար հեղինակներու հոգեշահ մատեանները. նուիրական առաքելութիւն մը՝ որուն ձեռնարկած էր նաեւ Մխիթար Աբբահայր, իր աշակերտներով, Արեւմուտքի մէջ:

Իր այս գործելակերպով, Կոլոտ Պատրիարք յաճախ խստօրէն ալ կը քննադատուէր իր կողմնակիցներէն, օտարապէր ու լատինամէտ նկատուելու աստիճան: Ան նոյնիսկ կը ստիպուէր, հակառակ իր խաղաղասէր ու հաշտարար բնավորութեան, երբեմն տուրք ընծայել ծայրայեղօրէն ազգայնական խմբակի տեսակէտներուն, անտեղիտալի կեցուածք բռնելով՝ ընդդէմ կաթողիկէ հոսանքին պատկանողներուն.

3. Յովհաննէս Կոլոտ Պատրիարք (Յիշատակի ոգեկոչում), Իսթանպուլ 1978, էջ 6:

4. Հ. ՄԻՔ. ՁԱՄԶ. յիշ. գրծ. էջ 775:

ու աշխատեց՝ հրապարակել պահ մը կրկին կը մթագնէր ընդդիմադիր բախումներու ամպերով եւ հալածանքներու փոթորիկով:

Մեր կարծիքով, սակայն, Կոլոտի այդ անդիշող դիրքը՝ կաթողիկէ խմբակին հանդէպ, ո՛չ այնքան անոնց դաւանական համոզումներուն համար էր, որքան՝ հաւանօրէն՝ անոնց անջատողական ձգտումներուն համար, ինքզինք նկատելով հայ Եկեղեցւոյ եւ հայ ժողովուրդին միասնութեան միակ պատասխանատուն, որպէս կառավարական հրամանագրով հաստատուած օրինական ազգապետ:

Անշուշտ այսպիսի դատումներ առարկայօրէն կատարելու համար՝ հարկ է հեռանալ այժմեան մեր մտածելակերպէն ու մտայնութիւններէն եւ շուրջ քառորդ հազարամեակ ետ վերադառնալ, որպէսզի հնարաւոր ըլլայ թափանցել ժամանակուան հոգեբանութիւններուն մէջ, եւ անկողմնակալ հոգիով մերձենալ հարցերուն: Այս տեսակէտով, անշուշտ, որոշ լոյս կը նայ սփռել նաեւ այն նամակը՝ զոր Կոլոտ Պատրիարք ուղղած է Արեւմուտքի եկեղեցական Պետերէն մէկուն, 1738ի Դեկտեմբերի 4ին, եւ որ առաջին անգամ ըլլալով լոյս կը տեսնէ՝ մեր ներկայ թիւին մէջ, Հռոմի պատմական դիւաններէն հանելով: Իսկ Միաբաններուն հետ Կոլոտ Պատրիարքի ունեցած յարաբերութիւններուն եւ յարակից խնդիրներուն մասին՝ հանգամանօրէն կը խօսուի այս ներածական տողերուն յաջորդող ուսումնասիրութեան մէջ, դիւանական բազմաթիւ վաւերացողութիւններով լոյսին տակ:

Յովհաննէս Կոլոտ Բաղիշեցի մեծանուն Պատրիարքի ծննդեան երեքհարիւրամեակին առիթով՝ թող յարգանքի ու գնահատանքի դոյզն փռենք մը նկատուին մեր այս համեստ խօսքերը, զոր երկիւղածօրէն կը զետեղենք Ղալաթիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյն մէջ հանդիշող իր նշխարներուն վրայ:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

9

Résumé

(Article de fond)

A LA MEMOIRE DE HOVHANNES KOLOT PATRIARCHE ARMENIEN DE CONSTANTINOPLE (1717-1741)

(P. NERSES DER NERSESSIAN)

A l'occasion du troisième centenaire de la naissance (1678-1978) du célèbre Patriarche arménien de Constantinople, Hovhannēs Kolot, l'Auteur en illustre la personnalité et les mérites dans une perspective œcuménique, s'inspirant du portrait qu'en donne le père de l'historiographie arménienne moderne, le P. Mik'aēl Č'amč'ean.

Après avoir présenté le cadre historique du patriarcat arménien de Constantinople, établi en 1461 par le sultan ottoman Mehmet II le Conquérant (Fatih), l'A. rappelle brièvement les principales étapes de la formation spirituelle et culturelle du futur Patriarche et de ses premières activités apostoliques. Il souligne en particulier le rôle, dans cette formation, du célèbre monastère de Sourb Hovhannēs Karabet (St. Jean Baptiste) de Baḡēš, appelé aussi «Amrtōl»; en fait, ce monastère avait connu une période de grande floraison au cours du XVII^e siècle sous la direction de son supérieur Vardan Vardapet Baḡiṣec'i dont Hovhannēs Kolot et le futur Patriarche arménien de Jérusalem, Grigor Št'ayakir, furent les plus illustres disciples.

C'est en 1710 que le jeune vardapet Kolot arrive à Constantinople, la capitale impériale qui attirait un bon nombre d'Arméniens venant des provinces intérieures de l'Anatolie. Kolot y connaît un succès remarquable et contribue d'une manière décisive à libérer le siège patriarcal des dettes dans lesquelles il s'était trouvé englouti.

En 1717, Kolot est élu Patriarche arménien de Constantinople. Par ses nouvelles constructions, ses entreprises culturelles et, en particulier, par son attitude tolérante envers la minorité catholique de la population arménienne, il apporte un nouveau souffle à l'histoire troublée de la communauté arménienne de la capitale et de l'Empire. Bien que patriarche depuis 1717, il n'est sacré évêque qu'en 1725.

Kolot donne un élan particulier à l'imprimerie et en surtout à la publication de livres de théologie et de spiritualité. Même il n'hésite à faire traduire et à publier des œuvres de théologiens occidentaux, comme celles de Scott.

L'A. conclue en citant S. S. Vazgēn I, Catholicos de tous les Arméniens, et S. B. Šnorhk' Galoustean, Patriarche des Arméniens de Turquie, qui voient en Hovhannēs Kolot «la figure la plus illustre dans la succession des patriarches arméniens de Constantinople, ayant brillé par sa vie, son œuvre et par l'esprit qui l'éclairait».